Հայ աղջիկների առաջնորդությունը ֆուտբոլում (GOALS)

2020 Տարեկան հաշվետվություն

GOALS-ի մասին

Տեսլական

Աշխարհ, որտեղ յուրաքանչյուր աղջիկ ունի հավասար հնարավորություններ:

Առաքելություն

Ֆուտբոլ խաղալու համար ապահով տարածքներ ստեղծելով՝ GOALS-ը աջակցում և հզորացնում է երիտասարդներին դառնալ ապագա առաջնորդներ:

Սկզբունքներ

GOALS-ի առաքելությունն ու գործունեությունը հիմնված են հետևյալ առաջնորդող սկզբունքների վրա՝

- Հավասար հնարավորությունների իրավունք,
- Լսվելու իրավունք,
- Անվտանգ միջավայր ունենալու իրավունք,
- Սպորտի՝ սոցիալական ազդեցության միջոց լինելու կարողություն,
- Կին առաջնորդներ ունենալու կարևորություն,
- Ներքևից- վեր գնացող փոփոխությունների ուժը:

Սիրելի աջակիցներ, գործընկերներ և ընկերներ,

2020 թվականը դժվար տարի էր: COVID-19- ի պատճառով տարվա առաջին կեսն հիմնականում անցավ սահմանափակումների մեջ, իսկ երկրորդ կեսին մենք կանգնած էինք պատերազմի մարտահրավերների առջև:

Համավարակը և Արցախյան պատերազմը իրենց ազդեցությունն են թողել բոլորիս՝ մասնավորապես խոցելի համայնքների կյանքում: Մեր պարտքն էր գտնել ստեղծագործական և նորարարական լուծումներ՝ շարունակելու ներգրավել մեր աղջիկներին: Ծարժվելով առաջ, մենք քայլեր ենք ձեռնարկում մեր ուսումնական ծրագիրը վերաիմաստավորելու ուղղությամբ ՝ հարմարվելու մեր նոր իրականությանը:

Մշակելով մեր հետագա գործունեությունը՝ մենք այժմ շեշտը դնում ենք հոգեկան և ֆիզիկական առողջության, և գյուղական համայնքների երեխաներին անձնական հիգիենայի կարևորությունը սովորեցնելու վրա: Մենք բոլորս մեր դերակատարությունը պետք է ունենք մեր համայնքները հնարավորինս անվտանգ պահելու գործում:

Իմ և GOALS ընտանիքի անունից, ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ մեծահոգության և շարունակական աջակցության համար:

Շնորհակալություն:

Թենի Ավակյան
GOALS Նախագահ և Գործադիր տնօրեն

Հզորացված **աղջիկներ**
հզոր **Հայաստանի** համար:

ԼԻԳԱՆԵՐ

GOALS-ը երիտասարդ աղջիկների համար ստեղծում է կազմակերպված ֆուտբոլային լիգաներին մասնակցելու հնարավորություններ: Մենք տրամադրում ենք ենթակառուցվածքներ, մարզիչներ, սարքավորումներ և ռեսուրսներ՝ Հայաստանի գյուղական համայնքներում աղջիկների լիգաներ ստեղծելու համար:

Մենք ունենք ութ գործող լիգաներ Հայաստանի ութ մարզերում՝ Ծիրակում, Տավուշում, Կոտայքում, Գեղարքունիքում, Վայոց Ձորում, Սյունիքում, Լոռիում և Արմավիրում: Յուրաքանչյուր լիգա ունի առնվազն չորս թիմ, և յուրաքանչյուր թիմ ունի 9-15 խաղացող: Լիգայի մրցաշրջաններն են մարտ-մայիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսները:

672 աղջիկներ լիգաներում › **54** համայնք › **70** մարզիչ

«Հնարավորությունները, որոնք ընձեռում է GOALS- ը երիտասարդ կանանց, հատկապես Հայաստանի մարզերում բնակվողների, բացառիկ են: Ես հպարտ եմ, որ հանդիսանում եմ GOALS-ի Սյունիքի լիգայի համակարգողը և Գորիսի թիմի մարզիչը: Այժմ ես միայն աղջիկներ եմ մարզում և նման կազմակերպության աջակցությամբ համոզված եմ, որ այս երիտասարդ կանայք կարող են ամեն ինչի հասնել, եթե քրտնաջան աշխատեն և հավատան իրենց սեփական ուժերին»:

Արմեն Ղազարյան, Մարզիչ, Սյունիքի լիգայի համակարգող

ԼԻԳԱՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ



- Արթիկ, Շիրակ
- Արմավիր, Արմավիր
- Ալավերդի, Լոռի
- Դիլիջան, Տավուշ
- Գավառ, Գեղարքունիք
- Եղեգնաձոր, Վայոց Ձոր
- Գորիս, Սյունիք
- Չարենցավան, Կոտայք

Մարզիչների վերապատրաստում

GOALS-ի ծրագրերում ընդգրկված աղջիկները 11-17 տարեկան են: Երբ մենք խոսում ենք ազդեցության և մեր աղջիկներին տրամադրվող հնարավոր այլընտրանքային ուղիների մասին, դրանց թվում է նաև պրոֆեսիոնալ մարզումը: 2020 թ. սեպտեմբեր 6-ին GOALS-ի վեց կին մարզիչներ մասնակցեցին UEFA C կարգի լիցենզիայի վերապատրաստումներին, որոնք տեղի ունեցան Ֆուտբոլի ակադեմիայում: Հարկ է նշել, որ այս մարզիչներից 2-ը մեր շրջանավարտներն են:

Շնորհակալ ենք մեր գործընկեր Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիային այս հնարավորությունը ստեղծելու համար:

GOALS-ը ապահով միջավայր է ստեղծում աղջիկների համար, որպեսզի նրանք թիմի, ընտանիքի անդամ դառնան: Եվ ինչպես ընտանիքի անդամի այնպես էլ մեր աղջիկների համար մենք միշտ ձգտում ենք հնարավորություններ ստեղծել՝ ավելի լավ ապագայ կերտելու համար:

Սպորտը որպես աջակցություն

2020 թ.սեպտեմբերի Արցախյան պատերազմից հետո, օգտագործելով GOALS-ի ուսումնական ծրագիրը՝ նախաձեռնեցինք միջոցառումներ և խաղեր պատերազմից տեղահանված երեխաներին աջակցելու համար: Այս «Սպորտը աջակցության համար» նախագիծն իրականացվեց դոկտոր **Գարի և Լինդա Ասսարյանների** ֆինանսական աջակցությամբ:

Մեր գործողությունները կենտրոնացված էին Երևանում, որտեղ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի և Վահագնի համայնքի հետ համագործակցության արդյունքում կազմակերպեցինք խաղեր՝օգտագործելով նրանց բացօթյա ֆուտբոլային հնարավորությունները:

Այս գործողությունների միջոցով մենք կարողացանք պատերազմից տուժած երեխաների համար ստեղծել անվտանգ և ընկերական մի միջավայր՝ արտահայտելու և լուծելու իրենց խնդիրներն ու վախերը, միաժամանակ օգնելով նրանց ձեռք բերել վստահություն, դիմացկունություն, մարտահրավերներին դիմակայելու հմտություններ և հույս:

Պատերազմից տուժած

260

երեխա մասնակցեց մեր միջոցառումներին

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԻ և ԼԻՆԴԱ ԱՍՍԱՐՅԱՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

2
Աշխատակից

1
Պրակտիկանտ

8
Մարզային Համակարգող

11
Խորհրդի Անդամ

70
Կամավոր Մարզիչ

10
Կամավոր

8
Բուժքույր

10
Մրցավար

ԱՌՑԱՆՑ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

Այս տարի, անկախ անորոշությունից և աննախադեպ հանգամանքներից, արեցինք հնարավորինը՝ կատարելու մեր պարտավորություններն ու աջակցելու մեր աղջիկներին ու գործընկերներին: Չնայած ի վիճակի չէինք վերսկսել կանոնավոր ծրագրերը, մենք գտանք նորարարական և ստեղծարար տարբերակներ՝ մեր աղջիկներին ներգրավված պահելու և նրանց շարունակական աճն ու ուսուցումն ապահովելու համար:

Մեր գործընկերոջ՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ մեր շահառուների համար կազմակերպեցինք առցանց մարզումների դասընթացներ:

Մարզման տեսանյութերը պատրաստել և ներկայացնում էին Հայաստանի Կանանց Ֆուտբոլի Ազգային Հավաքականի անդամները:

20

Առցանց մարզումներ



ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Անդրեա Մոնտալբանո
Վիկտորիա Դոկկեն
Լերի Վրանկա
Քրիսթին Սերջենյան Յրվուդ
Լուսինե Քասարջյան
Զաք Թիլեր
Աննա Հակոբյան
Դիրոն Ջեբեջյան
Էլի Բեյլի
Լուսինե Միրզախանյան
Իրինա Ղափլանյան

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Coaches Across Continents
Հայաստանի Մանուկների Հիմնադրամ (COAF)
Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա
Փարոս Հիմնադրամ
ՀԲԸՄ
Ասսարյան Ընտանիք
Ayo! Բազմաֆինանսավորման հարթակ
ՀԲԸՄ Հայաստանի «Քաղաքացիական հասարակության կամուրջ» ծրագիր
Եվրասիա համագործակցության հիմնադրամ
Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն
Հայաստանում ԱՄՆ Խաղաղության Կորպուս (UN Peace Corps)
Դեպի Հայք (Birthright Armenia)
Impact Hub Երևան
Կանզասի Ազգային Գվարդիա
Soccer Sisters
ՍՈՍ Գյուղեր
streetfootballworld
Վորլդ Վիժն Հայաստան
Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնը- Գյումրի
Գորիսի քաղաքապետարան
Բանանց ֆուտբոլային ակումբ
Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտություն
Դիլիջանի միջազգային դպրոց (UWC Dilijan)
Աչաջուրի դպրոց
Ակսել Բակունցի անվան դպրոց
Ալավերդու մարզադպրոց
Ամասիայի միջնակարգ դպրոց
Անուշավանի դպրոց
Արփիի միջնակարգ դպրոց
Արենիի միջնակարգ դպրոց
Արմավիրի մարզադպրոց
Արտաբույնքի դպրոց
Արթիկի N4 դպրոց
Արթիկի դպրոց
Արթիկի պետական քոլեջ
Ազատանի միջնակարգ դպրոց
Բերդավանի դպրոց
Չարենցավանի ֆուտբոլի մարզադաշտ
Դեբեդի միջնակարգ դպրոց
Դիլիջանի N3 դպրոց
Դիլիջանի N6 դպրոց
Դսեղի միջնակարգ դպրոց
Գանձակի դպրոց
Գավառի N2 դպրոց
Գավառի N8 դպրոց
Գեղարքունիք գյուղի դպրոց
Գորիսի մարզահամալիր
Հարթաշենի միջնակարգ դպրոց
Հովիտի դպրոց
Կապանի ֆուտբոլի մարզադաշտ
Քարահունջ գյուղի դպրոց
Քարինջի միջնակարգ դպրոց
Խնձորեսկի մարզադպրոց
Խոտի միջնակարգ դպրոց
Կոռնի Ձորի դպրոց
Լանջիկի միջնակարգ դպրոց
Լճափի միջնակարգ դպրոց
Մարգահովիտի դպրոց
Սևանի դպրոց
Շենիկի ավագ դպրոց
Տաթև գյուղի դպրոց
Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց
Թումանյանի միջնակարգ դպրոց
Վերիշենի դպրոց
Եղեգնաձորի մարզադպրոց

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կապվեք մեզ հետ

info@goalsarmenia.org

www.goalsarmenia.org